հիւսիսոյ Սատիրաց[ւ]ոց[1] ծայրին. եւ ի նորին կղզ[ե]աց[2] անցանելով ընդ Տապռաբ[ան]իո[յ] կղզ[ւ]ոյն[3] ստորոտն, եւ անցանէ ընդ Կալոսի լիճ եւ յԱսապուս[4] գետո[յ] ակունք. եւ ընդ Պիղեալ լեառն եւ ընդ Նեղոսի գետով վտակս եւ ընդ Սպիտակ Եթ[է]ովպիայս[5], ըստ հարաւոյ կողմանէ, եւ Թէոքիմա[յ] լերինն, որ կոչի Աստուածոց աթոռք, ընդ Իւքիս լեառն, ընդ Ջկնակեր Եթ[է]ովպացիս[6]՝ յԱնծանաւթ երկիր։

4 *[7]Եւ յաղագս Ովկիանոսի, որպէս յառաջագոյն ասացի, է զկողմամբ Զեփիռոս[8] հողմոյ։*
5 *Սկսանի ի քսան եւ մի[9] մասնէ լայնութեան առ Ջկնակեր Եթ[է]ովպաց[ւ]ովք[10] եւ առ լերամբքն, որ Թէոքիմայն[11] անուանեն, եւ պատէ զարեւմուտս՝ մինչ ի սպառ լայնութեան[12] չափոյ. եւ դառնա[յ] ընդ հիւսիսի յարեւելս կոյս՝ մինչեւ վաթսուն[13] մասն երկայնութեան, որ է հանդէպ Կարկինիտէն ծոցոյն Պոնտոսի, առ* [5բ] *Քեռսոնիւ, կչիռ Տիոս[14] քաղաքի՝ Ոնոռիատ[15] աշխարհի, եւ Հեռապալսի՝ Սաղուտարիս[16] Փռիգաց[ւ]ոց[17], եւ Դէդաղա^{ղա}[18] տեղւոյ, որ կայ առ եզր ծովուն Լիկիոյ[19], արդար՝ Մսր է[20], որ է Եգիպտոս։*

6 *Արդ[21]՝ որպէս[22] ասացաք, ցվաթսուն[23] մասն Ովկիանոս եկեալ դադարէ, եւ ի նմանէ յառաջ առնու ^{յ}Անծանաւթ[24] երկիր եւ պատէ զմնացեալ մասունս հիւսիսոյ եւ զարեւելս եւ զհարաւ, եւ քսան[25] մասն յարեւմտից՝ մինչեւ ց[ն]ոյն[26] Ովկիանոս։* 7 *Իսկ արտաքոյ այսր չէ ուրուք տեսեալ, վասն որոյ Անծանաւթ կոչի երկիր եւ Ովկիանոս։* 8 *Եւ է [յ]Ովկիանոս[27] ծանաւթ նաւագնացութեան կղզիկք[28] վեց[29] ըստ հարաւո[յ], որ*

---

1 *V* Սատիրացոց *փխ* Սատիրացւոց *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս ճախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

2 *V* կղզաց *փխ* կղզեաց *(վեր. Սուքրեանի՝ ըստ յաջորդի. տե՛ս ճախ. Ե.312)*

3 *VS* Տապռապիո[յ] կղզոյն *փխ* Տապռաբ[ան]իո[յ] կղզ[ւ]ոյն *(վեր.՝ ըստ յաջորդների. տե՛ս ճախ. Ե.314, 326 եւ հմմտ. բարբառային* **Բ → Պ**. *Պտղոմէոսի մօտ եւ ճամառօտում ամենուր՝* Տապռոբանիա. կղզ[ւ]ոյն *վերականգնման համար տե՛ս ճախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

4 *S* Ասապուս *փխ* յԱսապուս *(V)*

5 *V* ր̅ղ̅ եթովպիայս, *S* Եթովպիայս *փխ* Սպիտակ Եթ[է]ովպիայս *(վեր.՝ V-ի* **ր̅ղ̅**-*անման գաղափարագիրը վերծանելով՝* «սպիտակ». [է]-*ի վերականգնումն՝ ըստ յաջորդների, օր.՝ ճախ. Բ.9, 17, Դ.31)*

6 *VS* Եթովպացիս *փխ* Եթ[է]ովպացիս *(վեր.՝ ըստ յաջորդների, օր.՝ ճախ. Բ.9, 17, Դ.31)*

7 *Այս պարբերութիւնից առաջ Երեմեանը վերականգնելի է համարում ենթավերնագիր՝* «Յաղագս Ովկիանոսի»

8 *V* Սեփիռոս *փխ* Զեփիռոս *(վեր. Սուքրեանի)*

9 *V* ի̅ա̅

10 *VS* Եթովպացովք *փխ* Եթ[է]ովպաց[ւ]ովք *(վեր.՝ ըստ յաջորդների, օր.՝ ճախ. Բ.9, 17, Դ.31)*

11 *VS* Թէաքիմայն *փխ* Թէոքիմայն *(վեր., տե՛ս ուշ երկաթագիր* ***Ո → Ա*** *եւ հմմտ. ճախ. Բ.9, 29)*

12 *S* լայնութեամբ *փխ* լայնութեան *(V. հմմտ. ճախ. Դ.1)*

13 *V* կ̅

14 *V-ի այս անհասկանալի* կչիռ Տիոս-*ի փխն. գոնէ բուն աղբիւրում վերականգնելի է թւում՝* **Կղաւդիու**պաւլիս, *որը Բիւթանիայի հարեւան Ոնոռիատ մարզի մայրաքաղաքն էր (տե՛ս ճախ. Ե.25)*

15 *VS* Անոռիատ *փխ* Ոնոռիատ *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս ճախ. Բ.5, Ե.24, 25, 27)*

16 *S* Սալուտարիս *փխ* Սաղուտարիս *(V)*

17 *VS* Փռիգացոց *փխ* Փռիգաց[ւ]ոց *(վեր.՝ ըստ յաջորդների, տե՛ս ճախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

18 *V* Դէդաղաղա, *S* Դեդաղա *փխ* Դէդաղա^{ղա} *(վեր., Պտղոմէոսի մօտ՝* Δαίδαλα. *տե՛ս* **Դէդա-ղա-ղա***)*

19 *V* Լիկբոյ, *S* Լիբոյ *փխ* Լիկիոյ *(վեր., հմմտ. ուշ երկաթագիր* ***Ի → Բ****)*

20 *VS* արդակմար *փխ* արդար՝ Մսր *(վեր. ըստ Սուքրեանի դիտարկման, որը տողատակում ծանօթագրել է՝* «Այսպէս յՕր. թուի լինել *արդակ Մսր*, այսինքն ուղղակի Մսր, որ է Եգիպտոս». *V-ի գրիչը* արդակմար *անհասկանալի բառի սկզբնատառի վրայ կայծակնաձեւ նշան է դրել՝ առանց ուղղում տալու, գուցէ եւ՝ ուղղելի համարելով հէնց բառամիջի ինչ-ինչ տառեր)*

21 *V-ում* Ա-*ն գլխատառով է, նոր տողից եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է*

22 *V* ո̅ր̅ *փխ* որպէս *(վեր. Սուքրեանի. կանոնաւոր համառօտագրումը պիտի լինէր՝* ո̅պ̅*)*

23 *V* ց̅.կ̅. *[պատուոյ նշանների տակ = «վեց հազար վաթսուն»] փխ* ցվաթսուն *(վեր. Սուքրեանի)*

24 *VS* յԱնծանաւթ *փխ* ^{յ}Անծանաւթ *(վեր.)*

25 *V* ի̅

26 *V* ցոյն *փխ* ցնոյն *(վեր. Սուքրեանի)*

27 *V* Ովկիանոս *փխ* [յ]Ովկիանոս *(վեր. Սուքրեանի)*

28 *S* կղզիք *փխ* կղզիկք *(V. նոյնն է երկիցս ստորեւ. կանոնաւոր փոքրացուցիչը կը լինէր* կղզեակք*)*

29 *V* զ̅